ԽՈՍՔԸ՝ ՄԵՐ ԳԼԽԱՎՈՐ ԹՂԹԱԿՑԻՆ

ՎՃՌԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ Է ՊԵՏՔ

«Մոսկովսկիե նովոստի» պարբերականում հրապարակված «Դա շրջափակում չէ» վերնագրով հարցազրույցը կարդալիս իմ մեջ հարց առաջացավ. ինչպե՞ս կընկալի ընթերցողը Ադրբեջանի ժողովրդական ճակատի (ԱԺՃ) անդամ Լ. Յունուսովայի հայտարարությունը, թե Հայաստանի նկատմամբ իրենց արածը շրջափակում չէ, այլ պարզապես իրենք այլևս չեն տալիս այն, ինչ տվել են տարիներ շարունակ: Ստացվում է, որ շրջափակման օրերին Ադրբեջանի երկաթուղային գծերում իրար գլխի՛ հավաքված հարյուրավոր գնացքների պարունակությունը Ադրբեջանի Հանրապետությունից մեզ տրվող ապրանքնե՞ր են եղել: Ուրեմն մեզ տարիներ շարունակ պահել ու կերակրել է մեր հարևան հանրապետությունը, և մենք չե՞նք իմացել: Ուրեմն մենք այնքան կախված վիճակում ենք նրանից, որ այժմ կարելի է լրիվ տնտեսական բլոկադայի՞ ենթարկել մեզ: Ինչքա՞ն ամբարտավան պիտի լինի մարդը, որ, մեղանչելով ճշմարտության դեմ, ամեն ինչ գլխիվայր ներկայացնի: Այդ նյութից իմանում ենք (այլ աղբյուրներից էլ գիտենք), որ Ադրբեջանի Գերագույն խորհուրդը իր արտահերթ նստաշրջանում որոշում է ընդունել լուծարքի ենթարկել ԼՂԻՄ-ի Հատուկ կառավարման կոմիտեն, ապա, ԱԺՃ-ի ճնշմամբ, նույն նստաշրջանում օրենք է ընդունել հանրապետության սուվերենության մասին: Լ. Յունուսովան ընդգծում է, որ մինչ այդ օրենքն ընդունելը Կենտկոմի առաջին քարտուղար Վեզիրովը փորձել է ուժի դիրքերից կարգի հրավիրել ԱԺՃ-ի անդամներին (որպես սանձարձակների), սակայն տեղնուտեղը սկսված հանրապետական գործադուլը ստիպել է առաջին քարտուղարին ենթարկվել ժողովրդի ներկայացուցիչների կամքին:

Չէ, մեզ դժվար է համոզել, որ այդ փաստաթղթերն ընդունվել են հանրապետության ղեկավարության կամքին հակառակ, ներքևից գործադրված ուժի ազդեցությամբ: Դա ևս մեկ քաղաքական խաղ է, որով մեր հարևանները փորձում են կատարվածին ժողովրդական բնույթ հաղորդել:

Ժողովուրդն ասում է. «Երեխային երես մի տուր, որ չդառնաս նրա կամակատարը»: Սումգայիթում կատարված ոճրագործությունը երեխայի խաղ համարվեց կենտրոնական ղեկավար մարմիններում: Իսկ «երես առած երեխան» ավելի մեծ համարձակություն ստացավ իր նկատմամբ ցուցաբերված ներողամիտ վերաբերմունքից: Հիմա նրա հետ մարդկային ոչ մի լեզվով չես կարող խոսել: Ամենազազրելի կեղծիքն ու սուտը, նենգությունն ու ստորությունը դարձան նրա զենքը: Փորձիր ապացուցել, որ՝ սևը, իրոք, սև է, սպիտակը՝ սպիտակ: Շփացած «երեխան» կպնդի, որ դու սխալ ես, ճիշտը դրա հակառակն է: Եվ էլի գտնվում են մարդիկ (այն էլ՝ ազդեցիկ դիրքի), որ ցույց են տալիս, թե հավատում են այս զավեշտին: Իսկ մենք ո՞ւմ հավատանք: Ո՞ւմ և ինչպե՞ս հավատանք, երբ մեր «միջնորդ դատավորները» խոսքերը մեկ արած կրկնում են, թե «երկու կողմերն էլ հավասարապես մեղավոր են»: Երկու կողմերի մեղքերի միջև հավասարության նշան դնելը նույնպես քաղաքականություն է, կասեի՝ թույլի, վճռականություն չունեցողի քաղաքականություն: Բայց կեղծ հաշտարարի այդ դիրքորոշումը չի նպաստի պրոբլեմի լուծմանը: Վճռականություն է պետք, ճշմարտության, արդարության վրա հենված վճռականություն:

Մ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

ԱՅՍՕՐ ՄՏԱԾԵՆՔ ՎԱՂՎԱ ՄԱՍԻՆ

Պաշտոնական զրույցներում, թե առօրյա խոսակցության մեջ մեր յուրաքանչյուր երկրորդ խոսքը Հայաստանի և Ադրբեջանի այժմյան հարաբերությունների մասին է: Արցախի և Հայաստանի շրջափակումը լուրջ հետևություններ անելու անհրաժեշտություն է առաջադրում: Մենք հիմա ենք նկատում, որ հանրապետության հիմնական ճանապարհը երկրի մյուս շրջանների հետ անցնում է Ադրբեջանով, և դրա խափանումը կարող է ծանր հետևանքներ ունենալ մեզ համար: Մինչ այս չէինք նկատել: Հիմա դառը փորձով համոզվեցինք, թե ինչ է նշանակում այլ ճանապարհ չունենալը (Անդրերկաթուղու՝ Թբիլիսիից եկող երկաթուղագիծը որքան էլ կարևոր դեր խաղաց այս օրերին, այնուամենայնիվ, տեխնիկական իր հնարավորությունների սահմանափակությամբ չի կարող փոխարինել «մեծ ճանապարհին»):

Ահա առաջացել է հուսալի ճանապարհ ունենալու խնդիրը: Կարծում եմ, հարկ է մտածել բարեկամական, եղբայրական Վրաստանով դեպի երկրի կենտրոն տանող նոր երկաթուղագիծ կառուցելու մասին: Սա դժվար խնդիր է, ֆիզիկական և նյութական մեծ ծախսեր է պահանջում, բայց հրամայական է:

Չէի ուզենա, որ ստեղծված իրավիճակի պատճառներից մեկը (թերևս, գլխավորը) համարվեր դավանանքի տարբերությունը: Մենք երկար ժամանակ մոռացել էինք այդ գործոնի մասին, բայց պարզվեց, որ այն կա ու կարևոր դեր է խաղում ազգերի փոխհարաբերություններում: Ելնելով դրանից՝ կիսում եմ այն կարծիքը, որ Վրաստանով մեր անցուդարձը ապահով կլինի:

Եվս մեկ հարց. Արցախի պրոբլեմի քաղաքական լուծման քաշքշուկը, ըստ էության, երկրի մյուս ժողովուրդների կողմից հարցին անբավարար տեղյակության հետևանք է: Շատ քչերը գիտեն, թե ինչ է կատարվում Արցախում, և արցախցին բարոյական ինչ հիմքեր ունի իր պահանջի մեջ: Պատճառը լրատվական յուրօրինակ շրջափակումն է: Աղավաղվում են դեպքերը, շահագրգիռ կեղծով մեկնաբանվում: Կենտրոնական թերթերն ու լրատվության մյուս միջոցները չեն ուզում խորանալ իրադարձությունների բուն էության մեջ: Ընթերցողին հասնում է կիսաճշմարտությունը (լավագույն դեպքում): Նույնիսկ ԽՍՀՄ Գերագույն խորհրդի դեպուտատները հնարավորություն չունեն (ճնշող մեծամասնությունը) իմանալու՝ ինչ է ներկայացնում իրենից արցախյան պրոբլեմը:

Ի՞նչ նպատակ է հետապնդում այսպիսի վերաբերմունքը: Արդյո՞ք միայն պրոբլեմի լուծումը փակուղի մտցնելու ձգտում: Համենայն դեպս, դեպքերի ընթացքը մեզ իրավունք է վերապահում այլ կասկածներ էլ ունենալ... Մեր մտավախությունը վերահաս վտանգից հաճախ քամահրանքով է ընդունվում վերևներում, բայց ինչո՞ւ չտեսնել, չլսել այն, ինչ բացարձակորեն գրում են մեր հարևանները: Վաղը ուշ չի՞ լինի խոստովանել, որ աչալուրջ չենք եղել...

Ա. ՓԻՐՈՒԶՅԱՆ
Բարբյուսի փող. № 9 տան բնակիչ

ՈՒՐ ՄՆԱՑԻՆ ԲԱՐՁՐԱԳՈՉ ԼՈԶՈՒՆԳՆԵՐԸ

1988 թ. նոյեմբերին ստիպված թողեցի տունուտեղս Բաքվում, 48 տարիների ընդհանուր և 35 տարիների նավթարդյունաբերության մեջ կատարած աշխատանքիս (ավագ ինժեներ) արդյունքը և «փախստական» սրտաճմլիկ անվան տակ ընտանիքով եկա Հայաստան:

Հայրենական պատերազմի մասնակից եմ, գիտակցական կյանքիս հիմնական մասը ներդրել եմ Ադրբեջանի մայրաքաղաքի զարգացմանը: Ո՞ւմ մտքով կանցներ, որ կգա մի օր, երբ ավելորդ կդառնանք այդ քաղաքի համար զուտ այն պատճառով, որ Արցախի հայությունը ցանկություն կհայտնի ապրել մայր Հայաստանի հետ: Փախանք: Թող ընթերցողն այս բառը հասկանա իր բուն իմաստով: Փախանք, որովհետև խեղդված էինք թշնամական հեղձուցիչ մթնոլորտում, որովհետև չէր ապահովվում մեր կյանքի անվտանգությունը, որովհետև մեզ բացեիբաց ասում էին. «Գնացեք, թե չէ վատ կլինի»: Եղան մարդիկ, որ չուզեցին հավատալ մեր «բարեկամների» թշնամանքին, բայց իրենց անձի վրա զգացին բիրտ ուժի ազդեցությունը:

Ես այժմ գոհ եմ իմ վիճակից այնքանով, որ իմ ժողովրդի մեջ եմ, ազգային պատկանելությունս այլևս «չարիք» չէ ինձ համար, բայց մոռանալ կատարվածը, կորցրածը, ապրածը՝ հնարավոր չէ: Այսօր էլ իմ հարազատներից և ծանոթներից մարդիկ կան Բաքվում, որ պահվում են որպես պատանդ: Ոչ կարողանում են հեռանալ քաղաքից, ոչ էլ մարդավայել ապրելու հնարավորություն ունեն: Նույնիսկ օրվա ապրուստի հոգսը չեն կարողանում հոգալ:

Վիրավորանքը, տուժելը, հանցագործության նկատմամբ օրենքն իր ողջ խստությամբ չկիրառելը ցավ են պատճառում ինձ ու ինձ նմաններին: Ախր, խորհրդային երկրում, երկիր, որը տասնյակ տարիներ իրեն ներկայացրել է որպես ժողովուրդների իսկական բարեկամության միություն, ինտերնացիոնալիզմի դպրոց, այդ ինչպե՞ս հնարավոր եղավ այսպիսի հակամարդկային արարք կատարել: Ո՞ւր մնացին բարձրագոչ լոզունգներն ու հավաստիացումները «ինտերնացիոնալիստ Ադրբեջանի» մասին: Չէ՞ որ արցախահայությունը սահմանադրական ազնիվ ճանապարհով առաջ քաշեց իր պահանջը: Ինչո՞ւ դա ընդունվեց թշնամանքով և արյունահեղությամբ: Հիմա էլ, երբ գրեթե այլևս հայ չի մնացել հանրապետությունում, որ նրանց վրա ուժ գործադրեն, մեր «ինտերնացիոնալիստ» հարևանները շեշտը դրել են տնտեսական շրջափակման վրա: Այդպիսի միջոցներով նպատակին հասնելը անբարոյականություն է: Կգա ժամանակը, երբ իրենք՝ այս ամենի նախաձեռնողները, երևի կգիտակցեն իրենց արածի հետևանքը և ողջ պատասխանատվությունը, որովհետև կատարվածը հարևանի հետ համակեցության ոչ մի կանոնի չի համապատասխանում:

Լավ չի՞ լինի պատասխանատվության բեռը չծանրացնելու համար կանգ առնել կես ճանապարհին:

Ա. ՆԱԶԱՐՅԱՆ
Երևանի «Գիտելիք» ընկերության դասախոս, ՀՊ-ի վետերան